ՀՏԴ 323.1(479.243) Պատմություն

Հասմիկ Ամիրջանյան,
պատմական գիտ. թեկնածու, գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,
e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒՍ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (XVIII Դ. ՎԵՐՋ)

Նշանավոր քաղաքական ու հոգևոր գործիչ Հովսեփ Արղությանը, օգտագործելով ռուսական կառավարության հետ իր կապերը, ռուս ռազմական ու քաղաքական գործիչների շրջանակներում բարձրացնում էր Արցախի մելիքությունների ազատագրական պայքարի հարցերը: Ռուս-թուրքական պատերազմի ընթացքում արքեպիսկոպոսը ռուս գործիչների ուշադրությունը նամակներով մշտապես բևեռում էր այդ հարցերի վրա: Նա նամակներ էր հղում նաև Արցախի մելիքներին, կոչ անում ազատագրվել պարսկական լծի, երաշխավորելով այդ հարցում Ռուսաստանի օգնությունը:

Բանալի բառեր-արքեպիսկոպոս, թեմական առաջնորդ, ռուս հրամանատարություն, Արցախ, քաղաքական հարաբերություններ, կաթողիկոս, Գ. Պոտյոմկին, մելիքներ, հայկական թեմ, նամակ, հոգևոր գործիչ, ցարական կառավարություն:

Асмик Амирджанян,
кандидат исторических наук,
научний сотрудник института истории НАН АР
e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

ПЕРЕГОВОРЫ МЕЖДУ АРХИЕПИСКОПОМ ИОСИФ АРГУТЯН И РУССКИХ ДЕЯТЕЛЯХ ОБ ОСВОБОЖДЕНИЯ АРЦАХА (КОНЕЦ XVIII В.)

Видный государственный и религиозный деятель архиепископ Иосиф Аргутян, используя свои связи в русских правительственных кругах, всячески поднимал вопрос освобождения Арцаха из-под чужеземного ига в кругах русского военного руководства. За годы русско-турецкой войны, архиепископ отправил множество писем руководству русского военного ведомства, пытаясь привлечь их внимание к этому вопросу. Он писал письма также арцахским меликам, побуждая их освободиться из-под персидского ига, советовал восстать и обещал помощь русских в этом деле.

Ключевые слова - архиепископ, епархиальный предводитель, русское командование, Арцах, политические отношения, католикос, Г. Потемкин, мелики, армянская епархия, письмо, религиозный деятель, царское правительство.

Hasmik Amirjanyan,
Doctor of History, scientific researcher Institute of History,
National Academy of Sciences of Republic of Armenia,
e-mail: amirjanyan.hasmik@rambler.ru

THE AGREEMENTS BETWEEN ARCHBISHOP HOVSEP ARGHUTYAN AND THE RUSSIAN FIGURES FOR THE LIBERATION OF ARTSAKH (THE END OF THE 18th CENTURY)

The prominent political and religious figure Archbishop Hovsep Arghutyan raised the question of the nationale liberation struggle for Artsakh in the circle russian military authorities. During the Russian-Turkish Wars, The Archbishop send a lot of letters to Russian military figures, trying meid there attention in this question. He had written letters alsou to meliqs ov Artsakh, motivating them to emancipate from the Persian yoke, advised them to oppose and promised Russian help in that cause.

Key words-Archbishop, leader of eparchy, Russian generals, Artsakh, political relationships, Catholicos, G. Potyomkin, meliqs, Armenian eparchy, letters, religos figure, The Charist govermente.

XVIII դ. սկսած, կապված Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության ուղղությունների ու ընթացքի հետ, հայ ազգային-ազատագրական շարժման մեջ նոր երանգներ են ստանում կայսրության օժանդակությամբ հայ ժողովրդին օտարի լծից ազատագրելու հարցերը: Դարավերջի ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը՝ ռուսահայ հոգևոր թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանը, ակտիվ քաղաքական գործունեություն ծավալեց՝ ռուս ռազմական-քաղաքական գործիչների ուշադրությունը բևեռելու այդ հարցի վրա: Դրա վկայությունն են 1780-ական թթ. սկսած ռուս քաղաքական գործիչների հետ վարած նրա բանակցությունները, որոնց ընթացքում արքեպիսկոպոսն անպայմանորեն անդրադառնում էր Արցախին, որը դարձել էր հայ ազգային-ազատագրական շարժման կենտրոններից մեկը: Արղությանի հարցադրումների

առանցքն այն էր, որ հայերը պատրաստ են իրենց ազատության համար պայքարել՝ ռուսական կառավարությունից ակնկալելով գոնե սկզբնական փուլում ռազմական օգնություն, հավաստիացնելով, որ ռուսական զորքը տեղում պարենի և փոխադրամիջոցների պակաս չի զգա:

Ցարական կառավարության՝ դեպի Անդրկովկաս արշավանք ձեռնարկելու և դիրքերն այնտեղ ամրապնդելու ծրագրի շրջանակներում 1780 թ. հունվարից Պետերբուրգում խորհրդակցություններ են ընթանում արքունիքում բարձր դիրք զբաղեցնող Հ. Լազարյանի, Հ. Արղությանի և ռուս քաղաքական-ռազմական գործիչներ գեներալ Ի. Գորիչի, նշանավոր զորավար Ա. Սուվորովի, Հարավային Ռուսաստանի կառավարիչ Գ. Պոտյոմկինի միջև[1]: Հունվարի 13-ի հերթական տեսակցությունն ամբողջովին նվիրված էր Արցախի մելիքություններին. հայ գործիչները մանրամասն տեղեկություններ են տալիս հինգ մելիքությունների քաղաքական, ռազմական ու տնտեսական իրավիճակի վերաբերյալ: Ռուսների նպատակն էր պարզել իրենց առաջխաղացման ու տեղի քրիստոնյաների ռազմական ու տնտեսական կարողություններն օգտագործելու հնարավորությունները:

1782 թ դեկտեմբերի 21-ին Հյուսիսային Կովկասի բանակի գլխավոր հրամանատար գեն. Պ. Պոտյոմկինը (Գ. Պոտյոմկինի ազգականը) Արղությանին գրած տասներեք կետից բաղկացած իր հայտնի նամակում[2] հարցում է անում նաև Արցախի մելիքների և նրանց ժողովրդի վերաբերյալ, նաև թե ինչ՞ միջոցներով կարելի է ապահովել մելիքների հավատարմությունը:

Դեկտեմբերի 28-ի իր գրավոր պատասխանում, ինչպես նաև 1783 թ. հունվարի 28-ին գեներալի խնդրանքով գրած <<Պատմական նկարագրություն Ղարաբաղի մելիքների մասին>> վերնագիրը կրող հայտնի գրության մեջ Արղությանը հավաստիացնում է, որ մելիքներն ու նրանց հպատակ ժողվուրդը պատրաստ են ռուսական զորքի օգնությամբ տապալել օտար լուծը[3]:

Գեներալի հանձնարարությամբ Արղությանը բանակցությունների վերաբերյալ գրություններ է ուղարկում Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանին ու մելիքներին[4], որոնք Գանձասարի վանքում ժողով են գումարում և որոշում գրությամբ իշխան Գ. Պոտյոմկինին և Եկատերինա II կայսրուհուն (1762-1796) խնդրել շտապեցնել խոստացած արշավանքը[5]: Բոլոր դիմումներն ուղարկվում էին Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի միջոցով, որպես <<իրենց գործերի գլխավոր հոգևոր միջնորդի>>[6]:

1783 թ. մարտ-հուլիս ամիսներին գրած նամակներում Հովհաննես կաթողիկոսն ու մելիքներն Արղությանին հավաստիացնում են, որ ռուսական զորքն իրենց երկրում ոչ մի դժվարություն չի կրի և պարենի պակաս չի զգա: Մելիք-Աբովը գրում է, որ իր երկիրը լի է բարիքներով, և <<Որքան զօրքն շատ լինի, անհոգ եմք վասն խորտկաց եթէ ընբելեաց>>[7]: Ի պատասխան օգոստոսի 11-ին արքեպիսկոպոսը նամակներով կաթողիկոսին, մելիքներ Աբովին, Մեժլումին, Բախտամին ու Մելիք-Շահնազարին, հավատացնում է, որ ռուսական արշավանքը շուտով կսկսվի: Վերջինիս կոչ է անում ինքնակամ ընդունել ռուսական հպատակություն: Մելիք-Շահնազարին նամակով դիմելու քայլն ուներ իր ներքին դրդապատճառը, այն է՝ շոշափել մելիքի տրամադրվածությունը ռուսների նկատմամբ, քանի որ նա հակված էր դեպի պարսիկները: 1783 թ. հունվարի Գ. Պոտյոմկինին ուղղած նամակում գեն. Պ. Պոտյոմկինը ևս նշում է, որ Ռուսաստանին հակառակ է մնացել միայն Մելիք-Շահնազարը[8]:

1783 թ. վերջերին և 1784 թ. ընթացքում Արղությանն իր հավատարիմ գործիչների միջոցով լուրեր է ստանում հայ բնակչությունից ու մելիքներից, որոնք խնդրում էին արագացնել խոստացած օգնությունը, քանի որ Իբրահիմ-խանը, իմանալով Ռուսաստանի հետ իրենց հարաբերությունների մասին, ավելի էր սաստկացրել ճնշումները[9]: Հովհաննես կաթողիկոսը նամակով Պ. Պոտյոմկինին հավաստում է, որ ինչպես պայմանավորվել են Հովսեփի հետ, ռուսական զորքի գալու դեպքում կտրամադրեն անվճար հաց, գարի, անասնակեր, ոչինչ չեն խնայի[10]:

Արղությանին մնում էր նամակներով Պ. Պոտյոմկինին փոխանցել, որ Արցախում ամեն ինչ պատրաստ է ռուսական զորքն ընդունելու համար: 1784 թ. մարտի 16-ին և 20-ին Աստրախանից Պ. Պոտյոմկինին խնդրում է. <<…եթէ ողորմութիւն կամիցիս առնել մէլիքացն և ողորմելի ժողովրդին նոցա, հաճեսցիս գրել Հերակլ արքային, օգնութիւն հաւանիլ նոցա, վասն զի եթէ արքայն Հերակլէս ըստ հաճութեան ձերոյ՝ հրաման ունիցի ի կայսերական մեծութենէն վասն տիրապետելոյ Ղարաբաղու և մէլիքացն, յոյժ դիւրին է նմա այժմ…>>: Խնդրում է

[1] Տես՝Ցիշատակարան, կազմ.՝ Վ. Զարդարեան, հ. Ա, Պոլիս, 1910, էջ 52, Աղանեանց Գ, Դիւան հայոց պատմութեան, գ. Թ, Թիֆլիս, 1911, էջ 17-18, 23-24-25, Армяно-русские отношения в XVIII веке (այսուհետև՝ Армяно-русское отношения…), сборник документов под ред. М.Г. Нерсисяна, т. IV, Ереван, 1990, док. 90, с. 152-153, док. 125, с. 203-207, док. 133, с. 219, Иоаннисян А., Россия и армянское освободительное движение в 80-ых годах XVIII столетия, Ереван, 1990, с. 38-41 և այլն:

[2] Նամակի ամբողջական տեքստը տես՝ Армяно-русское отношения…, док. 177, с. 196.

[3] Տես՝ Պարգև ավարդապետ Գևորգյան, Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի երկու նամակ-զեկուցագրերը որպես հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներ, <<Էջմիածին>>, 1962, Է, էջ 36-39, Армяно-русское отношения…, док. 131, с. 210-214.

[4] Արցախի նշանավոր մելիքներ Դիզակի Մելիք-Եսային, Ջրաբերդի Մելիք-Հաթամը, Մելիք Հովսեփը վախճանվել էին, նրանց գործի շարունակողներն էին դարձել որդիները՝ Մելիք-Բախտամը, Մելիք-Մեջլումը, և Մելիք-Աբովը:

[5] <<Արարատ>>, 1886, թիւ Դ, էջ 169:

[6] Собрание актовъ, относящихся к обозрению истории армянского народа (այսուհետև՝ Собрание актовъ ...), ч. I, Москва, 1838, с. 59-60.

[7] Армяно-русское отношения…, док. 140, с. 230, док. 141, с. 231, док. 144, с. 236.

[8] Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVIII- XIX դդ., 2007, Երևան, էջ 177-182:

[9] Հայոց պատմություն, 2010, Երևան, հ. 3, էջ 160:

[10] Армяно-русское отношения…, док. 200, с. 305.

<<…չպակասեցուցանել զգութ ձեր ի տարաբախտ ազգէ մերմէ…>>[1]: Հայաստանի բախտը շաղկապելով հարևան պետության ազատագրության ու անվտանգության հետ՝ արքեպիսկոպոսը գոհունակություն էր հայտնում ռուս-վրացական բարիդրացիական հարաբերությունների համար, կարծելով, որ այդ հարաբերությունները հող կնախապատրաստեն, որ Հայաստանը ևս հասնի Ռուսաստանի հովանավորությանը:

Բայց Անդրկովկասում քաղաքական նորահայտ հանգամանքները փոխեցին ռուսական արտաքին քաղաքականության ուղղությունը: 1784 թ. Պարսկաստանում գահ բարձրացավ Ալի Մուրադ խանը, որը պատրաստակամություն հայտնեց Ռուսաստանին զիջել մերձկասպյան տարածքները և Ղարադաղի, Ղարաբաղի, Նախիջևանի և Երևանի խանությունները, պայմանով, որ Ռուսաստանն իրեն ճանաչի պարսկական շահ և ռազմական օգնություն ցույց տա ընդդեմ Օսմանյան կայսրության: Ռուսական կառավարությունը օգտվելով ստեղծված բարենպաստ հնարավորությունից, որոշեց խաղաղ ճանապարհով լուծել Անդրկովկասի հիմնահարցը և բանակցություններ սկսեց պարսկական կողմի հետ:

Նման պայմաններում նախատեսված արշավանքը դարձյալ հետաձգվեց, ինչն Արղությանին տագնապի մեջ գցեց՝ ստիպելով այլևս չզարգացնել ընդարձակ ծրագրեր: Լսելով, որ Շուշիի Իբրահիմ խանը ևս ռուսական հպատակություն ընդունելու մտադրություն ունի, հոգևոր հայրը ռուսներից սոսկ խնդրում էր, որ այդ դեպքում Արցախի մելիքները <<…լինիցին ինքնագլուխ և միայն կախեալ ի հրամանս նորին արքայական մեծութեան Հերակլայ>>[2]:

1784-1786 թթ. ընթացքում Աստրախանից և Նոր Նախիջևանից գրած նամակներում ակնհայտ զգացվում է Արղությանի կասկածները՝ արդյո՞ք ռուսական զորքը կհասնի Հայաստան: Դրանցում Գանձասարի կաթողիկոսին մեղադրում է, որ չցանկացավ նոր խնդրանքներով դիմել ռուսներին, գանգատվում է Պ. Պոտյոմկինից, որը նրան խաբեց, Էջմիածնի կաթողիկոսի դիրքորոշումը ևս նրա սրտովը չէր և այլն[3]: Հնդկահայ գործիչ Շ. Շահամիրյանին գրում է. <<…դեռ մինչև ցայսօր ոչինչ կարգադրութիւն ոչ է եղեալ, թէպէտ խօսակցութիւն՝ բազում>>[4],- սույն քաղվածքը ևս ակնհայտ է դարձնում Արղությանի կասկածները ռուսական օգնության վերաբերյալ:

Այդ հուսահատությունը բխում էր նաև այն մեծ պատասխանատվությունից, որ նա վերցրել էր իր վրա՝ հայ գործիչներին ու ժողովրդին հավաստիացնելով, որ ռուսների օգնությամբ շուտով կգա բաղձալի ազատությունը. <<Հայերը այս նեղութեանց մէջ չըյուսահատուեցին, որովհետև Յովսեփ արքեպիսկոպոսը իշխան Գրիգորի Պոտեմկինի խոստումներով յուսադրուած՝ յուսադրում էր տառապող հայերին՝ թէ, նոքա շուտով ազատուելով մահմետականների բռնութիւնից և Վրաստանի հետ միասին Ռուսաստանի խնամակալութեան տակ ազատութիւն կը վայելեն>>[5]:

1785 թ. փետրվարի 5-ին Աստրախանից Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին և մելիքներին խնդրում է նամակներով նորից դիմել Պ. Պոտյոմկինին ու Հ. Լազարյանին[6]: Ինքը շարունակում էր ռուսներին ներկայացնել Անդրկովկասի քաղաքական կացությունը: Այսպես՝ օրինակ 1785 թ. փետրվարի 25-ին, ապրիլի 18-ին, հուլիսի 15-ին Պ. Պոտյոմկինին տեղեկություններ է տալիս Շուշու, Նախիջևանի, Դերբենդի և այլ վայրերի խաների գործողությունների վերաբերյալ՝ հիշեցնելով, որ մելիքներն առաջվա պես պատրաստ են բանակը Գանձակ հասնելուն պես միավորվել ռուսներին. <<…սպասեմ ուրախաբար գալստեանդ>>[7],-գրում է արքեպիսկոպոսը:

Շուտով սկսվեց ռուս-թուրքական երկրորդ պատերազմը (1787-1791), և Վրաստանում տեղակայված ռուսական զորակազմը հրամանատար Ս. Բուրնաշովի գլխավորությամբ ետ կանչվեց Անդրկովկասից: Մոլորված արքեպիսկոպոսը 1788 թ. հուլիսի 30-ին Արցախի մելիքներին գրում է. <<…Չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ իմն դուռն գտնել և բաղխել և կամ նորին արքայական մեծութեանն (Հերակլ II-ին-Հ. Ա.) աղաչել օգնել ձեզ…>>[8]: Մելիք-Մեժլումն ու Մելիք-Աբովը, հուսահատված, որ դրսից այլևս օգնություն կստանան, ռուսական զորքի հետ գնացին Թիֆլիս, ապա՝ Գանձակ: Արղությանն այդ մասին տեղեկացնում է հնդկահայերին՝ գրելով. <<Մեր ողորմելի մելիքքն ի Գէնջայ և ի Շամքօռեն իւրեանց ստորադրեցելովքն, օգնութեան տեառն սպասեն>>[9]: 1788 թ. հունվարի 7-ին և հետո արքեպիսկոպոսը Գ. Պոտյոմկինին ներկայացնում է տարագիր մելիքների վիճակը, նշում, որ վերջիններս կրկին դիմել են իրեն՝ միջնորդելու ռուսների օգնությանը: Բացի այդ, մելիքները Արղությանի միջոցով խնդրագրեր էին հղել գեներալներ Ի. Գորիչին և Պ. Տեքելլիին (Մոզդոկում տեղակայված ռուսական զորքերի հրամանատար): Փետրվարի 1-ին արքեպիսկոպոսը մելիքներին տեղեկացնում է, որ խնդրագրերն ուղարկել է հասցեատերերին: <<Գօրիչն առ քնեազն է մեծաւ փառաւորամբ և սպասեմք նորին յաջող գալստեանն>>,-գրում է հոգևոր հայրը՝ հուսադրելով նրանց Գորիչի գալստյամբ, որին անձամբ նամակ էր գրել: Ապա մելիքներին խորհուրդ է տալիս ևս մեկ անգամ նամակ գրել վրաց արքային, քանի որ լսել էր, որ վերջինս նպատակադրվել է արշավել Շուշիի խանի դեմ. <<…թերևս մելիքն մեր հաստատեսցե ի տեղս իւրեանց>>[10],-հույսը չէր կորցնում Արղությանը:

---

[1] Նույն տեղում, դոկ. 190, c. 295, դոկ. 191, c. 296.
[2] Иоаннисян А., նշվ. աշխ., էջ 128:
[3] Տես՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. 2699, թ. 50, 101-102, Армяно-русское отношения…, դոկ. 214, с. 324, Иоаннисян А., նշվ. աշխ., էջ 128:
[4] Армяно-русское отношения…, դոկ. 225, с. 336.
[5] <<Արարատ>>, 1886, թիւ Դ, էջ 173-174:
[6] Տես՝ Մատենադարան, ձեռ. 2699, թ. 19:
[7] Армяно-русское отношения…, դոկ. 220, с. 332, դոկ. 221, с. 331-332, դոկ. 224, с. 334.
[8] Մատենադարան, ձեռ. 2699, թ. 173:
[9] <<Ազդարար>>, N 1, 1974, էջ 22:
[10] Նույն տեղում, թթ. 155-162, 176:

1790 թ. հունվարի 23-ին Արղությանի կողմից Պ. Պոտյոմկինին ներկայացրած զեկուցագիրն իր բովանդակությամբ թերևս տարբերվում էր մյուսներից. մելիքների անունից առաջարկվում էր նրանց փոխադրել Կասպից ծովի ափը՝ Դերբենդի շրջակայքը, և տալ մշտական սեփականություն հողեր:

Ճիշտ է, մելիքների՝ Ռուսաստան գաղթելու միտքն Արղությանի կողմից խրախուսվեց (նա ինքն իր նամակներում բազմիցս շեշտում է, որ մելիքների ռուսական կողմնորոշմանը շատ է նպաստել, ինչպես օրինակ 1799 թ. հունվարի 20-ին Վ. Կոչուբեյին ուղղած նամակում), սակայն փաստերը ցույց են տալիս, որ այն առաջարկվել էր նախևառաջ ռուս գործիչների կողմից: Մելիքները դեռևս 1789 թ. սեպտեմբերի 19-ին Արղությանից խնդրում են ստույգ տեղեկություն տալ այն մասին, որ Գ. Պոտյոմկինը գեն. Պ. Տեքելլուն հանձնարարել է միջոցներ ձեռք առնել՝ մելիքներին վերաբնակեցնելու Ռուսաստանում[1]: Մելիք-Մեժլումն ու Մելիք-Աբովը պատրաստակամություն հայտնեցին գնալ Մոզդոկ, անձամբ բանակցություններ վարել, սակայն Հովսեփը խորհուրդ չտվեց. <<Ձեր գալն աստ ոչ է բարւոք… ո՞ գիտէ որքան են պահելոց և վախճանն որպեսի լինի>[2]: Բացի այդ, իրենք, մելիքներն են բազմիցս Արղությանից խնդրել անդրադառնալ սույն հարցին: Այլ հարց է, որ հոգևոր առաջնորդը, այլևս չակնկալելով ռուսների ռազմական օգնությունը, մշակեց մելիքների վերաբնակեցման միջոցառումների շարք՝ նախանշելով առավել ձեռնտու երթուղին:

Արղությանի համար հեշտ չի եղել հանգել նման տարբերակին: Այդ է վկայում հնդկաբնակ Ստեփան Շմավոնյանին 1788 թ. օգոստոսի 12-ին Աստրախանից գրած նրա նամակից արված սույն քաղվածքը. <<Մէծ իշխանն վասն իւրեանց հրաման ղրկած է, հրաւիրեալ յերկիրս այս…ինձ մեծ տարակուսանք է, թէ դոցա ինչ էն պատասխանելոց, այնպէս բան չառնէն, որ վերջն փոշիմանութիւն լինիցի, որպէս եղև մինչև ցայժմ:…Եթէ իրաւապէս իւրեանք պարտաւորութիւն ունին գալոյ յայս կողմունս, նախապէս պարտիս ինձ յիմացումն տալ>>: Արղությանը գտնում էր, որ դա չափազանց լուրջ որոշում է և անհրաժեշտ է ընդունելու դեպքում ծանր կշռադատել հարցի բոլոր կողմերը: Մասնավորապես նախապայմաններ մշակել և մելիքներից նախապես բանիմաց մարդիկ ուղարկել, որ այդ ամենը ներկայացնեն կառավարությանը, առայժմ գոնե երեք կետով. այն է՝ առաջին՝ հարկավոր է նրանց համար այնպիսի տարածք առանձնացնել, որ իրեն ծանոթ է, օրինակ Ղրիմը, քանի որ <<ինչ տեղերք գոն անդ, այն բոլորն ինձ է յայտնի, թէ որպիսի պայմանաւ պարտին գալ և նստիլ անդ, ին՞չ օրինօք կամ որպիսի կացութեամբ և ին՞չ իշխանութեամբ պարտին լինել>>[3],-իր առաջարկը հիմնավորում է արքեպիսկոպոսը: Երկրորդ անհրաժեշտ է զորք ուղարկել, որ նրանք իրենց ամբողջ ունեցվածքով կարողանան դուրս գալ երկրից, երրորդ նախապես միջոցներ ձեռք առնել, որպեսզի ժողովուրդը չգա ու այստեղ կարիքի մեջ ընկնի, այլ զբաղվի տնաշինությամբ ու հողագործությամբ:

Նախագիծը կյանքի կոչելու մտայնությամբ Արղությանը շարունակում էր ռուս գործիչների ուշադրության կենտրոնում պահել արցախահայության հարցը: 1792 թ. հունվարին Ա. Բեզբորոդկոյին, 1793 թ. մայիսին անդրկովկասյան զորքերի նոր հրամանատար Պ. Զուբովին, Սենատի անդամ Վ. Կոչուբեյին և այլոց ներկայացնում է մելիքների՝ ռուսական հպատակություն ընդունելու ձգտումը, անդրադառնում վերաբնակեցման գաղափարին[4]:

1795 թ. կեսերին, անձամբ մասնակցելով պարսիկ Աղա Մամադ խանի դեմ ուղղված ռուսների պատժիչ արշավանքին, թեմական առաջնորդը, նորից հուսալցվելով, եռանդուն գործունեություն է ծավալում: Ղզլարի ռազմական շտաբից գաղտնի նամակներ է գրում Արցախի մելիքներին՝ ավետելով ռուսական զորքերի գալուստը՝ հորդորելով պատրաստվել թե՛ զենքով, թե՛ պաշարներով ռուսներին օգնելու[5]: Ապրիլի 24-ին Հ. Լազարյանին գրած նամակից տեղեկանում ենք, որ գեն. Վ. Զուբովի (Պ. Զուբովի եղբայրը) հետ առանձնազրույց է ունեցել Արցախի վերաբերյալ[6]: 1796 թ. սեպտեմբերի 2-ին Պ. Զուբովին ներկայացրած զեկուցագրում հավաստում է, որ մելիքները դեռևս որոշակի ռազմական ուժ են ներկայացնում և պատրաստ են աջակցություն ցույց տալու ռուսներին[7]:

Արղությանը հույս ուներ, որ Արցախը գրավելուց հետո վերջ կդրվեր Իբրահիմի իշխանությանը, քանի որ ռուսական զորքերին տրված հրահանգում խոսվում էր Երևանը Վրաստանին միացնելու և Արցախի մելիքներին վրաց թագավորից կախման մեջ դնելու մասին, ինչի վերաբերյալ Արղությանը դեռևս արշավանքի սկզբին խոսակցություն էր ունեցել Վ. Զուբովի հետ[8]:

Սակայն ռուսական զորքն այդպես էլ Արցախ չհասավ, իսկ այդ ընթացքում Աստրախանում սպասող մելիքները 1799 թ. գնացին Պետերբուրգ և Արղությանի միջնորդությամբ խնդրագիր ներկայացրին Պավել կայսրին (1796-1801), ինչի հիմքով կայսեր հրամանագրով իրենց հպատակների հետ վերաբնակվեցին վրացահպատակ հայկական տարածքներում:

Լեոն (Առաքել Բաբախանյան) որակեց այդ քայլը որպես հուսահատությունից թելադրված <<քաղաքական ինքնասպանություն>>: <<Ռուսաստանի խոստումները, լուրջ պատրաստութիւնները առաջացրին մեծ ոգևորութիւններ, որը և մելիքների վերջնական քայքայման պատճառ դարձավ>>,-գրում է պատմաբանը, իրավամբ նշելով, որ այդ վայրը (Եկատերինոգրադը-որտեղ ըստ նախնական տարբերակի տեղափոխվելու էին մելիքները -Հ. Ա.) առաջարկել էր Արղությանը, քանի որ մելիքներն երբևէ Ռուսաստանում չէին եղել[9]: Ղուկաս կաթողիկոսը Շ.

[1] Собрание актовъ ..., ч. II, Москва, 1838, с. 62.
[2] Մատենադարան, ձեռ. 2699, թ. 159:
[3] Մատենադարան, ձեռ. 2699, թթ. 174-175:
[4] Армяно-русское отношения…, док. 261, с. 392, док. 265, с. 396-398, док. 347, с. 500.
[5] Кавказский вестникъ, N 10, 1901, Тифлисъ, с. 35, Тер-Саркисянц А., Армяне Нагорного Карабаха, Москва, 2015, с. 160.
[6] Մատենադարան, ձեռ. 2951, թ. 90ա:
[7] Լեո, Հայոց պատմություն, Երևան, 1973, հ. 3, էջ 395:
[8] Տես՝ Кавказская Старина, Тифлисъ, N 2, 1872, с. 33.
[9] Լէօ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, Թիֆլիս, 1902, էջ 169, 120:

Շահամիրյանին գրում է. <<…ի դարձի զօրացն կամաւ իւրեանց չուեցին ընդ նոսա յերկիրն ռուստաց, որոց զորպիսութիւնն ի Յովսեփ արքեպիսկոպոսէն ունիս իմանալու…>>[1]:

Սակայն փաստենք, որ մելիքների դիմում-խնդրագրին համակիր էին նաև Հ. Լազարյանը և հայ մյուս գործիչները[2], բացի այդ, Արղությանի նախագծի որևէ կետը չիրագործվեց:

Այսպիսով, Հայաստանի ազգային-ազատագրական շարժման իրագործման հարցում Արղությանի համար կարևորագույն առանցք էր Արցախի ազատագրումը պարսիկ խաների լծից: Նրա քաղաքական հիմնվորման առանցքը Արցախի մելիքների՝ իրենց տարածքներում դեռևս բավականին ռազմական ուժ ներկայացնելու իրողությունն էր: Լինելով նուրբ դիվանագետ՝ արքեպիսկոպոսը գիտակցում էր, որ Արցախը ռուսների համար կարող էր դառնալ ռազմական հենակետ, քանի որ <<դա շատ էր հետաքրքիր ռուսներին, ամբողջ Պարսկական Հայաստանի մեջ Ղարաբաղի ժողովուրդը միակ պատերազմող տարրն էր>>[3]: Եթե Երևանի Խանության հայերին արքեպիսկոպոսը նամակներով ոգևորում էր, որ ռուսական զորքը կաջակցի նրանց պայքարին, ապա այլ էր մելիքների հարցում, երբ ռուսական հրամանատարությանը հավաստիացնում էր, որ մելիքները կմիանան ռուսական զորքին և կընդառաջեն արշավանքի հաջողությանը: Այդ են վկայում նրա ծրագրերի այն կետերը, որոնցով առաջարկվում էր զինել Արցախի մելիքներին:

[1]Աղանեանց Գ., նշվ. աշխ., Թիֆլիս, 1893, գիրք Ա-Բ, էջ 33:
[2] Հայոց պատմություն, հ. 3, էջ 166:
[3]Լէօ, Յովսէփ կաթողիկոս Արղութեան, էջ 108-109: